

հեռու կը սիրենք Հայ զիրն ու խօսք, և զայն կը պանծացնենք ի լուր Ամերիկեան հոկայ հասարակութեան։

«Կոչէտկ» (Ամերիկա)

Թ. Մ. Մագուպեան

## ՆԱՌԱԿՆԵՐ ԽՄԲՈԳՐՈՒԹԵԱՆ



### I

Էջմիածին, 29 մայիսի,

Հայկական գրերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յօրելեանի առթիւ պիտի հրատարակուի մի բրուխիւր՝ բաղկացած մի տպագրական թերթից, փոքրադիր 64 երես, հայ գրերի գիւտի և տպագրութեան պատմութիւնն ու նշանակութիւնը ժողովրդականուցրած՝ դպրոցական աշակերտներին ձրի բաժանելու համար։ Աշխատանքներից լաւագոյնի համար վարձատրութիւն նշանակում է յիսուն ռուբլի, Այդպիսի աշխատանք ունեցողներից կամ գրել ցանկացողներից խնդրում է ուղարկել իրանց աշխատանքը մինչև 1912 թ. յուլիսի 31-ը հետեւալ հասցեով։ Ծանոթագրութեան, Կանոնադատական Վեհապետութեան Առաջնաժողովի առաջնախագահ՝

Յորել. Յանձնաժողովի փոխնախագահ՝

Դարեգին վարդապետ

Անդամ-Քարտուղար՝ Դ. Ալմունեան

### II

Մոսկովա, 27 մայիսի.

Ահագին ծիծաղ յառաջացրեց արտեղ այն հայ-հոյանքների կոյտը, որ «ԵՄարա» անուն կըող աեղիս թերթը թափել է «Աղերական» «Հովհանի» և իմ զլատին իր վերջին համարում։ Այդ ողորմելի թերթի աւելի քան ողորմելի խմբագիրը կանգնել է հայելու առաջ, ինքն իրան նկարել և ենթադրել է, որ ուրիշներին դրանով հայհոյում է... Տէրը նրա հետ, թող միիթարուի։

Ես նրան երբէք չեմ որատասխանի և երբէք դատի չեմ կանչի։ Կայծունու պէս մարդկանց ընդունուած չէ պատասխանել, որովհետեւ ոչ ոք չի ցանկանայ դրանով իր արժանապատութիւնը վիրաւորած լինել, ոչ ոք նրան քանի տեղ չի դնում, ոթ սчитаются ոչ հԱՄԵ, ինչպէս ասում են ոռուները։

Բայց ես երկու բան պիտի յայտնեմ։

1) Ես «փողաւոր» մարդ չեմ, այլ ամենահասարակ ծառայող և ապրում եմ միմիայն իմ ռոճիկով։ Եթէ վաղը պաշտօնիցս զրկուեմ, քաղցած պիտի մնամ ընտանիքին հետ, որովհետև կոպէկ չունեմ յետ զցած։ Կայծունին կարող է հանդիսանալ լինել, ինձանից մի մոռ կոպէկ նրան չի ընկնի...»

2) Մի քանի տարի սրանից առաջ Ն.-Նախիջևա-